

## 25. ՄԻՐԵ ՋՆԱՆԻ ԱԽՉԻԿ

Թակավորմ կէլնի, մեյ խատ լաճ կուՆենա: Թակավոր կմեռնի, լաճն էլ կասի որ իմ խեր մեռավ, ես պիտի ինեմ աշխար. կան գյամ:

Կինի աշխար կֆոա, կէրթա քյաղաքյմ տյուս կէլնի: Էտ քյաղքյի թակավոր ժամանակով մեռեր ի, որ խորիր են. էնոր գյերեզմնի վերեն խորոտ գյումբեթմ ին շինե, մեյ ծեռքյ էլ քյեռշկ սարա շինիր ին գյերեզմնի քյամակ:

Թակավորու ախչիյն էլ էտ քյեռշկ սարի մեչ նստուկ ի: Հմեն էրթացող-գյացողի խամար, էրկու խատ ոսկի կթնլի խոր գյերեզմանի վերեն, էրթացող-գյնցող կվերուցի, կէրթա:

Էտա թակավորն էլ էտա գյերեզմնին ռաստ կուգյն, թակավուրու ախչիկ վիրվանց էրկու խատ ոսկի կթնլի նոնն: Տղեն կկզվի, էրկու ոսկին կվերուցի:

Թակավորի ախչիկ փեՆջնրից տղին կասի. - Է՛յ, ջիել, իշկա՛, քյե պնմ ասեմ:

Կասի. - Ի՞նչ կասես:

Կասի. - Կնա՛ Սասնա քյաղաքյ. էնոր թակավորն էլ մեռեր ի, էնոր գյերեզմնի վերեն էլ ըսին գյումբեթ կա շինուկ: Էն գյերեզմնի իտևն էլ ըսին քյեռշկ սարա կա՝ թակավուրու ախչիյն մեչն նստուկ ի: Համան, որ էրթես էն գյերեզմնի վերեն, ախչիկ քյառսուն խատ ոսկի կթնլի:

Տղեն շատ կէրթն. քիչ կէրթն, կէրթն կխասնի Սասնա քյաղաքյ: Կէրթն կխասնի չուր թակավորի գյերեզմնի մոտ: Կտիսնա, որ գյերեզման շատ խորոտ ի շինուկ. էն մեկէլ գյերեգմնից խնզնր կադ խորոտ ի:

Մեկ էլ կտիսնա թակավորի ախչիկ կէլնի ուր քյեռշկ սարի փեՆշնրեն, մեյ խատ ոսկի կթալի վեր գյերեզմնին: Կկզվի, ոսկին կառնի. որ պիտի կայնի. մեյ խատ էլ կթնլի. վարհասըլի մեյ մեկ կթնլի, չուր քյառսուն խատն կթմմի:

Տղեն կթողնի կէրթն էն տեղից. կէրթն ուրիշիմ տուն կմնա: Կմնա չուր իրիկուն, կտիսնա, որ կալաբալըղ գյուտուլթի կինի էտա քյաղաքյի մեչ: Կէլնի տյուս, կխարցուցի էսոր էնոր, թե. - Էսա ի՞նչ կալաբալըղ ի, ի՞նչ գյուտուլթի ի:

Էնոնք էլ կասին. - Աստված քյե պնրի տա, ի՞նչ կխարցուցես, թակավուրու լաճ ծոեր ի, հմեն օր առատուն կէլնի կխեծնի նշնրի ծին, կինի մեչ էսա փողըհտերաց, կզնին, կկոտոտի, կսպանի, կընցնի կէրթն չուր ծով: Կէրթն ծով հմեն օր, կլոխկնա չուր իրիկուն, կտնռնա ետ կուգյն: Իրիկյուն որ կտնռնա ետ, էլ մէլ զնելեն, կոտոտելեն. զարսուր-զիան տալեն կուգյն կխասնի տուն, չուր ծեռքյեր ոտքյեր կկապեն, կթնլեն ներս:

Թակավորու լաճ կտնոնա ուր տուն, կպառկի, կբյնի չուր առատուն. բյնուց կէլնի վեր. չայ կխմի. հաց կուտի. խացից սրա կտիսնա գյինա կալաբալը գյուտուլթի կինի բյաղբյի մեչ: Կէլնի տյուս կասի. - Էլմ ի՞նչ բաս ի:

Կասեն. - Ձե՞ս կիտի. թակավուրու լաճն ի. էլմ էլե տյուս կզանի կկոտոտի. կէրթա ծով:

Էս էլ կկայնի վեր փողնի տոռան. չուր թակավորու լաճ կուգյա կընցնի: Կաչքի չուր բյաղբյից կէլնի տյուս. կբաշլայի էն էլ իտևն ինել:

Կինի էնոր իտև. շատ կէրթա. քիչ կէրթա, թակավուրու լաճ մեյ խատ կիրիշկա ուր իտև. կտիսնա, որ երիտասարդմ ինգյե ուր ծիու իտև յավաշ-յավաշ կուգյա:

Կասի. - Հե՜յ երիտասարդ, տյու ինչի՞ ես ինգյե իմ իտև, մկա որ տառցա վերեղ, բյե կանեմ խոդին խավասար:

Էն ականջ չանե. էլմէլ էնոր իտևեն յավաշ-յավաշ կէրթա: Քիչմ տեղ էլ կէրթա. թակավուրու լաճ էլմ էլ կիրիշկա ուր իտև. կտիսնա, որ երիտասարդ ետ չի կէնա. ճար չկա:

Էտա թակավուրու ծոտ լաճ փետե թվանքյմ ի շինե թողե ուր թև, մեյ խատ էլ փետե խանչալ ի զանկե ուր մեչք, մէ խատ էլ փետե թուր ի կախե ուր բյամկից:

Կասի. - Հա՜յ երիտասարդ, բյո աչք իմ թվանքյն ի, ատ էն էլ բյե. զի լազմ չի:

Թվանքյն կէօլոխնի իտև:

Քիչմ տեղ էլ կուգյա, կտիսնա. որ երիտասարթ ալա ուր իտևից կբյելի. կասի. - Կա չկա բյո աչք իմ փետե խանչալ ի, - կէօլոխնի իտև, կասի. - Ատ տսուցի ետ:

Էն էլ կառնի. կզանի ուր մեչք, թվանքյի խետ մեյ տեղ:

Էլմ էլ կինի իտև չտանոնա ետ: Թակավուրու լաճ մեկ էլ կիրիշկա. կտիսնա, որ ալա ինգյե իտև կուգյա խետ:

Կասի. - Հեյ իսան օղլի, տյու ի՞նչ կուզես իմ անճար հալից, թե որ բյո աչք իմ թվանքյն էր, տվի բյե. թե որ բյո աչք իմ խանչալ էր. էն էլ տվի բյե. ես կիտեմ՝ բյո աչք իմ փետե թուրն ի, - կէօլոխնի իտև կասի. - Էսա էլ ատ, տանցի ետ, բյանի շոտ ի:

Թուրն էլ կառնի, կզանի ուր մեչք, էլ մէլ յավաշ-յավաշ կինի թակավուրու լաճու ծիու իտև կէրթա: Շատ կէրթա, քիչ կէրթա, կտիսնա, որ էտա երիտասարթ ալա ինգյե ուր իտև կուգյա:

Կասի. - Մարթ աստծու, տյու ի՞նչ կուզես իմ անճար հալից, ես ինգյիր եմ իմ ճանմխու խետ կէրթամ: Թե որ պամ կեր մոտս՝ հմեն էլ տվի, էլ ի՞նչ կուզես:

Էն էլ ջուլաբ կուտա, կասի. - Ախպյե՛ր, իմ աչք բյո թուր, թվանքյին չի, որ ինգյիր իմ բյո իտև:

- Ապա ի՞նչ ի բյո ուզածն:

Կասի. - Ես կուզիմ ինել բյո իտև, չուր բյո դանրդն խասկնամ:

Կասի. - Հե՜յ մարթ, խողեր տամ վեր գյլխուտ, իմ դանրդ չուր մկա մարթու չեմ ասե, չուր ես իմ խորն չեմ ասե, տյու վո՞վ ես, որ ես բյե ասեմ իմ դանրդ:

Կասի. - Ախպե՛րս, ինչի՞ չես ասե, ասա, բանքյի ես դանրմանմ նշանց կուտամ:

Էն էլ կասի. - Աշխարի հարստութեն իմ խորն էր: Էն որ չկարցավ իմ դանրդին դարման անել, տյու ու՞ր պառկիս պուճախ:

Էն ծին կբշի, էն էլ կինի իտև, չուր կուգյանն կխասանեն ծովու պռուկ:

Թակավուրու լաճն ի կնստի ուր խաղվներ կխանի, որ պիտի լոխկնա:

Կասի. - Ախպե՛ր, մեյ խատ բյո դանրդն զիկ ասա, հեմ ի՞նչ ի բյո դանրդ:

Էն էլ կասի. - Ախպե՛րս, ինչի՞ տյու էտա կանդար կուզես իմ դնարդն կիտնալ:

Կասի. - Ախպեր ջան, տյու քյո դարդ զիկ ասա, ես մենակ քյո դնարդին դարման պիտի կանամ անե:

- Աղե՛յ, - կասի, - ես իմ դնարդ քյե կասեմ, ամա, որ չկարցար դարման անել, քյե խողե ճրե կնցուցեմ:

- Իմ կնքուլն ի:

Թակավուրու ծուտ լաճ կսկսի ուր դարդն պատմել, կասի. - Եփ տղա էի, իմ խեր զի ճամխեց յոթ ծովու կղզին, մեյ խալիվոր մարթում մոտ տաս առնելու, չյունքյի աշխրիս մեչ էդ խալիվուրուց ավելի կիտնական մարթ չկեր: Ես էլ իմ խոր խոսքյն չկոտրիցի, էլն կնանցի: Իմ խոր զորքյեր զի տարան թանալիմ արին խալիվուրուն, տանցան ետ էկան, խալիվորն էլ ճեռկեց էն պաներ, որ բոշ էր, ոչինչ էր, էն զի տանս կուտեր: Աղեկ պաներ, կիտության պաներ զիկ իսկի չէր ասե: Մեյ խատ պատվական գյիրքյմ կեր խալիվուրուն, կպիրի գյանխտիկ կկանրտի, ինչ գյախ որ էն տուն չէլներ, շատ անուշ պատվական պաներ կեր մեչ գյրուկ: Աման քյանի որ գյանխտիկ կկանրտի, շատ ժամանակ չէր էլնի, էնոր խամար անա ես չկիտե էն գյիրքյ ի՞նչ գյիրքյ էր, անուն ի՞նչ էր: Մնաց օրմ խալիվոր զի էլանվ մտուց մառան, տուր փանկեց վեր զի, ասաց. - Տյու կաց ըստեղ, ես տեղմ կա կէրթանմ, կուգյանմ:

Ես էլ աչքիցի չուր խալիվորն էկավ: Խալիվորն եփ էկավ, տեսա պառավըմ խետ ուր իպե: Պիրելուն պես պառվուն կապեց սուն, կապեց սուն, կքյեց, կքյեց չուր նոնոոց իսկեց պառավ: Ես էլ մառնի պատի վերեն ծակմ կեր, էն ծակից թամաշա կանեմ ինքյ՝ ի՞նչ պիտի անի:

Խալիվորն իպե մեյ խատ թանշտ, իտիր պառվու ոտկերաց տակ, պառվուն աղեկ քյամեց, երփ քյամեց, էնոր արուն ախպրի պես չոաց մեչ էտա թանշտին: Պառվուն առցկեց սնից, տարավ կտոտեց, իլից մեչ ծովուն, ինչ արաց իսկի չեմ կիտե: Մենակ տանցավ ետ էկավ, էտ արնի թանշտ տարավ պախեց: Մնաց մեկէլ օր իրիկուն զի ճամխեց ուրիշ տեղմ գործի խամար: Զում ես տանցա էկա, տեսա խալիվոր թանշտմ փլավ իփե, ինազրե տրե դնն գյեռ:

Զի ասաց. - Էսա թանշտ փլավ բիթյուն պիտի ուտես: Ես էլ ասի. - Տնավե՛ր, ես մանյանր գյէլ եմ, աշուդ եմ, որ էտա բիթյուն ուտեմ:

Ասաց. - Պիտի ուտես, որ բիթյուն չուտես, իմ տասեր չես կանա խասկնա, չես ավարտե: Ես կէրթամ մեյ խատ տուս, ծովու քյանար, կտառնամ ետ, մեյ տեղ նոր կուտենք:

Խալիվոր երբ էլանվ կնանց ծովու անփ, ես էլն յավաշմ կնանցի թանշտի մոտ կայնա: Իրիշկացի որ թանշտի մեջի փլավ բիթյուն կարմիր ի: Երփ որ տեսա կարմիր էր, շոտմ իմ միտք առեց, ասի. - Հան էսա էն պառավ որ կեր, էնոր արնից ի շինե:

Իրիշկացի տեսա, որ էտա փլավի կուշտ իրեքյ ֆինջան թույն կեր տրուկ: Ես էլ պանիցի էտա թանշտի փլավ կիսուց անվել թափիցի մեչ խողերաց, խողեր տվի վերեն, կոխրճեցի, ըսկուն արի, որ էլ բանլու չէր անե փլուվ, սորա էն իրեքյ ֆնջան թույն առի ցանիցի վեր մնացած փլավին, ֆինջայթեր տրիցի էնտեղ:

Խալիվոր տսեն էկավ, էկավ տեսավ, որ թանշտի փլավ կեսն չմնացե: Ասաց. - Տղա՛, էսա փլավ ո՞վ էկավ կերավ, ի՞նչխ էլավ:

Ասի. - Ես եմ կիրե, տյու շատ անգյանգանր, ես անուրթի էի, կերա:

Խալիվորն էլ իրիշկաց թեխ ֆինջայթեր, կտիսնա որ տանոտակ ին: Եփ տեսավ

տնռտակ ին, ասաց՝ անպատճառ լցե վերեն, կիրեր ի: Սանինթս էրկու սորա պիտի սեռնի. չունքյի թունավոր փլավ կիրեր ի:

Ջաթի խալիվուրու միտքն էլ էն էր, որ թույն լցեր վեր փլավին. կիրիցուցեր. մեյ թախկվան մեջ մեռուցեր:

Խալիվորն բաշլայեց ուտել փլավ. ասաց ինքյն ուրնուր. - Էն թույնի թանրաֆ իրիսի փանրդեն կիրեր ի. մնացեր ի տակ, կուտեմ: Եփ կերավ պոծավ. խալիվոր մեռավ, ցվրտվավ էնտեղ: Երփ խալիվոր ցվրվավ. ես էլա էնոր կտորներ ժողվոտիցի. տարա լցի ծով, կուրիսցուցի: Նոր ուրախ-ուրախ տաւցա տուն, էն գյիրքյն առի. բաշլայիցի մեկիկ-մեկիկ կարդալ, թխթեր շոճմոճել, քյանի որ էլ վախ պանն չկեր. գյրքյի գյախտիկ տեղեր փտոիցի կնդա: Էն գյրքյի օրթեն. մեյ տեղ պանցի. պանալուն պես Միրե Ջնանի ախչիկ, սուֆրեն ծեռ. խազար պարութեն վերեն. էկավ նստավ իմ առաճ, ասաց. - Կտրիճ երիտասարթ. ուտենքյ. խմենքյ, քյեֆ ուրախութեն անենքյ բալքյի մեր մուրադին խասնենքյ. ես քյե եմ, դու զիկ ես:

Կերանքյ. խմանքյ. եփ ես գյիրքյ կոծիցի. Միրե Ջնանի ախչիկ խետ ուր սուֆրին կուրիսան:

Ես էլ էլա ջուլաբ ճամխիցի իմ խոր. թե իմ վարժանպետ մեռավ, շոտ էօրոխկի զի տար էսա կղզիի մեջ ես մենակ չեմ կանա ապրե:

Ջորքեր. իշխաններ էկան զի տանելու. ես էլ էլան Միրե Ջնանի գյիրքյ տրի իմ ծոց, ասի. - Էսա մենայ տանեմ խերիքյ ի, էլ զի լազմ չի:

Առի էկա չուր խորս տուն: Օրական իրեքյ տիր էտա գյիրքյ կպանի. Միրե Ջնանի ախչիկ խետ ուր սուֆրին. կառավաշներաց կուգյեր. կուտինքյ. կխմինքյ, քյեֆ կանինքյ, քյեֆ մեր քյեֆն էր:

Միրե Ջնանի ախչիյն էլ խե զի խոսք մեկ արաց. որ փսայվինքյ: Ես էլ հեմեն օր կեսօրին մեյ տիր կուգյի էսա ծովի մեջ կլոխկնի. էմյաթ չի անե. որ իմ գյիրքյ տնի սընդկի մեջ կամ ուրիշ տեղ:

Էն կանխն էլ, որ խալվներ կխանի, որ մտնի լոխկնի, աչ ծեռնով կպոնի. ծանխ ծեռնով զի կպոտի, ծանխ ծեռնով կպոնի, աչ ծեռնով կպոտի: Իմ գյիրքյ իմ աչիչ կխլին. կասի. որ տնեմ իմ խալվներաց վերեն կասի՝ կուգյա կխլեն կտանեն:

Մեկ օր մեչ ծովուն կլոխկնի. գյիրքյն իմ ծեռն էր, տեսանքյ մարթմ էկավ իմ մոտ, ասաց. - Կտրիճ երիտասարթ. ինչի՞ քյե ըսնա կնեղացուցես:

Ասի. - Ի՞նչ իմ նեղացուցե:

Էն էլ ասաց. - Էտա գյիրքյ փանթյութի մեչ քյո խալվներաց տիր ծովու պոուկ, խանգյիստ լոխկցի, վո՞վ կիտի գյիրքյ կա մեչ խալվներաց, որ գյան գյողնա, տնաշե՛ն:

Ես էլ չկիցա, թե էտա մարթ ի՞նչ մարթ էր, էնոր խանբար արի, մեկէլ օր որ էկա ծով, գյիրքյ տրի մեչ խալվներաց, ծալիցի, տրի ծովու ծանի, մտա մեչ ծովուն լոխկնալու, էն գյանխ որ ծովուց էլան տյուս, շապիյ-դոնս խագյա, պանցի էմէկել խալվներ աչկիցի, որ գյիրքյ չկա: Հեյ հաք, ասի, աջեբա իմ գյիրքյ ի՞նչխ էլավ: Ջայեր էրեյվան մարթն ի տարե. որ էկավ զի խափեց, ես գյիրքյ տրի մեջ իմ խալվներաց: Տաոցա մտածեցի, ասի. - Ջա՛նմ. էն էլ մարթմ էր զի պես. ես էլ մարթմ ի էնոր պես, էն ի՞նչխ էկավ կանխտիկ իմ գյիրքյ գյողցավ տարավ, իմ աչք վերեն էր, ի՞նչ գյանխ գյողցավ, ես չիմցն: Վարհասելի ես շատ մտածեցի, իմ խելքյ կնաց, ես ինգյան էնտեղ: Ես որ ծանգյնցիրի իմ տուն էրթանլու, իմ խերն էլ մտածիր էր՝ իմ լաճ էսօր դա՞ր մնաց, ծանգյնցավ. չէկավ, էլեր էր զորքեր էօրոխկիր էր իմ իտև,

ասիր էր. «Կնանցեր ծով. իմ լաճ ծովն ի կնանցե»: Իկիր ին սիսիր ին, որ ես էստեղ ինգյուկ ի, զի վերուցիր ին. տարիր ին, իսկի խելքյ չէր էլե վեր զիկ. ընկուն էր իմխելքյ կնանցե, որ չի իմցե. ի՞նչ էր էլե, ի՞նչ էր կնանցե: Մնաց չուր էմէկել օր իմ խելքյ էկավ վեր զիկ: Ամա ես ծուա ընտրիս. անլն չուր մկա եէլ ծուտ եմ, մեր քյաղքյի ժողովուրթ իմ ծեռ կապիցին իմ ծուութենից. էն կանդնար որ զյեշութեն արեցի. անլն չուր մկա եէլ կանեմ: Աիւաճ իմ դանրդ էսա եի. երիտասա՛րթ. որ ես քյե պատմեցի. դե՛. քյանի որ ասիր ես քյո դանրդին դարման կանեմ. յա՛ն տյու քյո ասածն կատարի. յա՛ն յոթ տարվան ճանմբանխն էլ շատ էլնես. իմ խոր պիտի ասեմ. քյե տա պոնել. քյո վիզ տա զանել:

- Շատ աղեկ, - ասաց թակավուրու լաճ:

Երիտասարթ ծովու քյանանրից էլավ յավաշ-յավաշ տանոցավ ետ, էկավ քյաղքյի մեչ:

Թակավուրու ծուտ լաճն էլ լոխկնալուց որ պոծավ. էլանվ խեծավ ուր ծին. զանելեն, կոտրելեն կնաց չուր խասավ ուր խոր քյոշկ սարեն, մտավ ներս:

Ծուտ տղեն թակավորին չէր ասե ուր դարդն ի՞նչ էր: Ինչ կանդնար որ թակավոր խստուցեր, ուր դանրդ չէր ասե ուր խոր:

Երիտասարթ էլանվ կնաց թակավուրու մոտ: Հրաման տվին կնաց խասավ մո թակավոր. թանմանդեմ էլավ ասաց. - Թակավոր ապրած կէնաս, զի հրաման կուտա՞ս զի մեկ-էրկու խանբանր կա քյե ասեմ:

Ասաց. - Ի՞նչխ կասես:

Ասաց. - Քյո լաճու վրայով մեկ-էրկու խանբանր պիտի զրուցեմ:

Ասաց. - Ասա՛ տեսնամ. խենքյ ի՞նչ կա, աստված խերն անի:

Ասաց. - Թակավոր ապրած կէնա, տյու ինչի՞ քյո երիտասարթ տղի դանրդին դարման չես կնդնե, չէ՞ տղեն ըսանն կչարչրվի, կտանջվի:

Թակավորն էլ ասաց. - Բալա՛մ, ես չուր էսօր ինչ կանդնար զոոիր եմ վերեն. էն ուր դանրդ զի չի ասե: Մեր էլմ. ընկուն քյոր ինչ կանդնար ննզիր-վանզիր կէ զոոեցին, խանդրիցին, ախր էն ուր դանրդ մե չասաց:

Ասաց. - Թակավոր ապրած կէնա, ես էնոր դանրդն կիտեմ ի՞նչ ի, ես քյե պատմեմ, տյու էնոր դանրման արա:

Էն դանմ թակավոր մեչ ուր սրտին սաստիկ ուրախցավ:

Ասաց. - Էնոր դարդ ի՞նչ ի:

Երիտասարթն բաշլայեց տղայի դանրդ՝ ինչխ որ ուր պերնեն լսիր էր, մեյ-մեկ թակավուրուն պատմեց:

Թակավոր ևո՛ր իմացավ ուր տղայի դանրդն ինչ էր: Երփ իմցավ, որ տղի դանրդն էն էր, ասաց. - Վա՛յ, վա՛յ, աստված քյո տուն ավիրեր, որ զի շուտունց ասեր, ես մկա շոտ էնոր դանրդին դարման ի արե:

Ասաց. - Թակավոր ապրած կէնա՛, ի՞նչխ պիտի էնոր ճարն անես:

Ասաց. - Էնոր ճար էն ի. որ էն զյիրքյ կնանցե ինգյե թշնամյաց ծեռ, պիտի փտոեմ, կնդնեմ, խանեմ տյուս: Զյունքյի էն մարթ, որ իկիր էր ծովու քյանանր, ասիր էր՝ քյո գյիրքյ սփր մեչ խալվներաց, էն մարթ սատանա եէր, էկավ զյիրքյն գյողցավ, տարավ իտուր ուր մեծերաց:

Քյանսն չուր առատուն:

Առատուն էլանն վեր. թակավոր էլավ պանլնիս իթանլ խազինի տուտ իպաց. մեյ խատ պատվական տուտուկմ մեչեն իխան տուս:

Երիտասարթին ասաց. - Տե՛. կտիսնա՞ս էսա տուտուկ:

Էն էլ ասաց. - Էտ ի՞նչ տուտուկ ի. թակավոր ապրած կէնա:

Ասաց. - Էն տուտուկ մկա կտիսնաս ինչ տուտուկ ի, կայնի փչեմ:

Թակավոր տուտուկ մել խատ իտիր պերան, փչեց. մել ջուխտ սատանա էկան թակավուրու առաճ կայնան: Էն ջուխտ սատանաներ ասին. - Ի՞նչ կուզես մեզնից. թակավոր ապրած կէնաս:

Թակավորն էլ ասաց. - Ինչ որ ուզեմ պիտի կատարեքյ էսա սանինթին:

Ասին. - Խա՛. ասա, քյո ուզածն ի՞նչ ի, պիտի կատարենքյ:

Թակավորն ասաց. - Ձեզնից կուզեմ, ինեքյ ասքյար ինչ կանդար ծի ինգյեր կա ժողվոտեքյ, պիրեքյ մո զիկ:

- Ծատ աղեկ, թակավոր ապրած կէնա, - ասին ու կանցին: Կնացին, կես սանինթ գյանխ մնաց-չմնաց, մեկ էլ էն տեսանքյ սատանեյթերաց խումբն էկավ, էլ աստված պարզիրես պախի, մել չի. միլիոնավոր ի էկան: Էկան բիթյուն ժողվոտվան թակավուրու ծոնծ: Բիթյուն կարքով կայնան, թակավուրուն թամանդա էլծն:

Թակավորն ասաց. - Ծի էլ ո՞ր տեղն ի ինգյեր մնացե:

Ասին. - Տեղ մարթ չմնացե:

Սատանեյթերաց բինբաշին էօրոխկիցին, ասին. - Կնա՛, խորոտ փետոի, չէլնե թանյիթալյ մնացե:

Կանցին իրեքյ խատ էլ առին էկան:

Թակավորն ասաց. - Դե՛, նստեքյ:

Նստան, սատանեյթերաց բինբաշին ասաց թակավուրուն. - Ի՞նչ որ կուզես մեզնից, խնթրենքյ, որ շուտ ասես, որ շուտ կատարենքյ:

Թակավորն ասաց. - Միրե Ջնանի գյիրքյ կուրիսեր ի, իմ լաճուն ի, վի՞ր մոտն ի՝ թող շուտմ խանի տյուս: Իմ լաճ յոթ տարի կանց յոթ ծովու կղզին չարչրվավ. ջէորով Միրե Ջնանի գյիրքյ իսկեց ծեռ, էն էլ էկաքյ գյողցաքյ, տարաքյ:

Բինբաշին խարցուց թակավորին. - Թակավոր ապրած կէնա, մարթ եռսուն տարի ինի Միրե Ջնանի իտև չի կանա կնղնե, քյո լաճ ի՞նչխ յոթ տարվան մեչ կնդավ:

Թակավոր ասաց. - Ասել կուզի ես սու՞թ կասեմ:

- Ներողություն, թակավոր ապրած կէնա, չինքյ ասե, թե տյու սութ կասես, համա կմտածենքյ, թե ախր պատճառմ կա, որ ըտսանն խանգյիստ իսկեր ի ուր ծեռ:

Թակավորն էլ ասաց. - Խա՛, պատճառ կա, էն ժամանակ, որ իմ լաճ ուր խալիվոր վանրժանպետի մոտ տանս կառներ, էն գյիրքյ էն վանրժանպետին էր, վանրժանպետն մեռավ, իմ լաճն էն գյիրքյ առեց էկավ:

Բինբաշին բիթյուն սատանեյթերաց իտուր երթում, թե՝ վիր մոտն ի էն գյիրքյ, թո շոտմ տյուս խանի, թե չէ՝ հմենին էլ թսկանֆ կանեմ, ես իմ ծեռնով:

Բիթյուն էլ էրթում ասին, թե մեր մոտ չի, մենքյ խանբանր չենքյ:

Բինբաշին ասաց. - Որ տյուք խանբանր չեքյ, չե՞քյ կիտե ախր վիր մոտն ի:

Էն մեյն ասաց. - Բինբաշի՛, մենքյ բիթյունս էլ ստեղ երթում կանենքյ, որ մոտ մե չի, էլ մենքյ ի՞նչ կիտենքյ վի՞ր մոտն ի:

Ասաց. - Չէլնի՞, թե ծեր ինգյեր ի մնացե դանրբրներ քյարերաց տկներ:

Ասին. - Չենքյ կիտե:

Ասաց. - Դե՛, շոտմ կանցեքյ փտոտեքյ:

Ասին. - Վո՞վ էրթա:

Ասաց. - Ով որ կտրիճ ի. թող մէ խատ վազի. բիթյուն տեղրանքյ բիթյուն ծակեր աչքի. գյն:

Էն մեյն որ հմենից շատ կվնզեր. կնաց: Փտոեց. ըստեղ. էնտեղ. էս պհնի մեչ. էն պհնի մեչ. մեյ խատ չաչալ սատանեմ պոնեց քյարերաց տկից. թփելեն առեց էկավ:

Ասաց. - Տե՛ր. մենակ էսա էր մնացե:

Բինբաշին էնոր լավմ իտուր երթում. թե Միրե Ջնանի գյիրքյ մո քյե չի՞. խան տյուս:

Չաչալ սատանեն ասաց. - Մո զի չի:

Բինբաշին տարավ իպե ըսկուն չափնլեխ իզարկ մեչ իրիսին, որ զինքյ ուր արուն խառնվավ իրար:

Ասաց. - Էսա բիթյուն ժողվոտվիր են ըստեղ: Մենակ տյու ես մնացե. շուն շան որդի, ապա վի՞ր մոտն ի, թե որ մո քյե եէլ չի. տյու ասխր կիտիս որտեղն ի, շոտ սալախ տուր:

Չաչալն էլ ասաց. - Որ ես կիտեմ՝ Միրե Ջնանի լաճ պառկե ֆլան սարի մեչ. տրե էն գյիրքյ ուր գյլխու տակ քյնե:

Ասաց. - Տյու կանա՞ս էրթաս պիրե:

Ասաց. - Զէ՛. էն իմ պանն չի. ես չաչալ ֆուքարեմ եմ խետ իմ խալին. էն կտրիճ մարթու պանն ի:

Ասաց. - Ի՞նչ տեսակ անեն. որ մոտեն առնեն: Էնոր մարիֆաթն ի՞նչ ի:

Ասաց. - Էնոր գյլխու վիրև կրա պոց պիտի անեն. վառին, որ մուխ դուման էն սար-քյար պոնի, էն գյնխ Միրե Ջնանի լաճ ուր գյլոխ պիտի վերուցի քյնու մեչեն, ասի՝ խենքյ էսա ի՞նչ դուման ի կերևա: Համա էնոր գյլոխ վերուցել. դնել մեյ կէլնի, ըսկուն որ կվերուցի, շոտմ կտնի: Էն կախ կտրիճ մարթ պետք ի, որ էնոր գյլոխ վերուցելու գյնխ գյիրքյը վերուցի, որ էն չիմնա:

Թակավորն ասաց. - Կտրիճ վո՞վ կա, որ ճամխեմ էրթա էտա պանն անի:

Երիտասարթն ասաց. - Թակավոր ապրած կէնա, երիտասարթ որ կա, ես եմ, էտա իմ պանն ի:

Թակավորն ասաց. - Է՛, որ ըսկուն ի, կնն:

Թակավոր ամր արաց, սատանեքյ բիթյուն ուրենց տեղրանքյ կնանցին:

Երիտասարթ էլավ ինգյնվ ճամբնխ: Ծատ կնանց, քիչ կնանց, խասավ մեկ անվերվերի, զարզնդուն սարիմ մեչ: Էլնվ սարի գյլոխ, բաշլայեց Միրե Ջնանի լաճու պառկած տեղ փտոտել: Ծատ փտոեց, վարհասըլի կնդավ: Տեսավ Միրե Ջնանի լաճ պառկե քյներ ի, խոխոոց ինգյե քյիթ-մոութ: Մտածեց՝ աղեկ խորունթ քյնու մեչ ի. հա՛:

Ինգյնվ սար-քյար, կոճեր, փետեր ժողվոտեց. իպե կոլոնեց Միրե Ջնանու լաճու գյլխու վիրև: Կրակ իտու ինե: Կրայ տալուն պես, մուխ-դուման սարեր պոնեց: Կես սանիթ գյնխ մնաց թե չէ. Միրե Ջնանի լաճ քյնուց ակխավ: Ինքյն էլ գյլխու վիրև նստեր ի քիչմ զատ: Միրե Ջնանու լաճ ակխավ, ասաց. - Էսա ի՞նչ մուխ-դուման ի սարեր-քյարեր պոներ ի: Ասելուն պես մեյ խատ գյլոխ վիրուց: Գյլոխ վիրուցելուն պես. երիտասարթ ծեռ պարզեց, գյիրքյ գյլխու տկից առեց: Համա Միրե Ջնանու լաճ իսկի չիմցնվ ի՛նչ էլնվ, թե ի՛նչ կնանց: Էլմ գյլոխ տնելուն պես ինգյնվ խորունթ քյնու մեչ: Երիտասարթ առեց գյիրքյ, իտիր ուր ծոց, ինգյնվ ճամբնխ, չում խասավ

թակավորի քյեռշկ սարեն: Էլ թակավուրու մոտ չկնաց. դողրի կնաց թակավուրու լաճու էօդեն: Տեսավ որ թակավորի լաճ պառկիր էր քյնիր էր:

Մտածեց ասաց. - Աջեբա որ քյնուց խանեմ վեր՝ զի զարմարմ չիտա՞. չունքյի ծոտ ի:

Մեյ խա կանչեց. - Թակավորի՛ լաճ:

Թակավրու լաճ գյլոխ վերուց. ասաց. - Ի՞նչ ի:

Ասաց. - Էլի վե՛ր, քյո խասրաթ կատարվավ:

Էն էլ ասաց. - Իմ խասրաթ կատարող վո՞վ էր. որ կատարվավ:

- Ես եմ, - ասաց. - քյո խասրաթ կատարող, որ քյո առնճ կայնիր եմ:

Երիտասարթ տարավ գյիրքյ իտուր թակավորու լաճու ճոնճ: Որ իտիր էնոր ճոնճ. տյու կասես, թե աստծու մատ էր տիպավ հարիֆին. գյիրքյ ւսոճև տնելուն պես. թակավուրու լաճու խելքյ-ախկլ էկավ վերեն:

Էլավ նստավ, ուր գյիրքյ մեյ մեկ իպնց: Պանալուն պես՝ Միրե Ջնանի ախչիկ խետ ուր կառավաշներաց սուֆրեն ծեռքյներ էկան: Էն գյնխ երիտասարթ իթող տյուս էլնվ էօդից, թակավորի լաճ ինոն Միրե Ջնանի ախչիկ ուրենց քյեֆ ուրախութեն արին մեյ տեղ:

Թակավորի լաճ սորա գյիրքյ կոծեց, Միրե Ջնանի ախչիկ զաթի կնաց: Թակավուրու լաճն էլ ի՞նչ արաց. Էլնվ թնմիզմ լվացվավ, սանդրվավ. ուր խալվներ փոխեց, խորոտմ սերսփվավ, որ էրթա խոր մոտ:

Երիտասարթ էկավ ներս, - Քյեֆտ անուշ ի՞, - ասաց. - թակավորի՛ լաճ:

- Անուշ կէնաս, սաղ էլնես. - ասաց, - երիտասարթ շան, էն աղեկութեն որ տյու զիկ արիր, իսկի մեյ մարթ չէր արե, ես էլ քյո նպատակին քյե պիտի խասուցեմ, իշալլահ:

Երիտասարթն թակավուրու լաճու խետ մեյտեղ թև տվին թիվի, կնանցին թակավուրու մոտ:

Ասին. - Պնարև քյե. թակավոր ապրած կենա:

Լավ թնմնանդեմ էլավ ուր խոր, կնանց նստավ:

Թակավորն էլ ուր լաճուն գյրկեց վեր ուր սոտին, պաքյեց ուզեց, աղեկմ ուրախցավ:

Թակավորի կնիկ, ախչիկ, նանզիր, վանզիր, վյուքյելաներ, բիթյուն ժողվոտվան, էկան թակավորին աչք լիս անել:

- Աչքտ լիս. - կասին. - թակավոր ապրած կենաս. լաճդ խելանցացավ: Տյու կասես թե լաճն ուր մոր մոտից նոր ծնիր էր՝ էն կանդնար վուր ուրախ ին:

Թակավուրու լաճ ուր գյրքյով մեյ քյանիմ ամիս այլամիշ էլնվ: Հմեն օր գյիրք կպաներ, Միրե Ջնանի ախչիկ կառավաշներու խետ սուֆրեն ծեռքյներ կուգյին, տղեն ուր քյեֆ խետ էնոնց կաներ, ինչ կանդնար որ ուր սիրտ կուզեր:

Շատ մնաց, քիչ մնաց, օրմ թակավորի լաճն ասաց ուր խոր. - Ես ընտրիս պիտի փսայվեմ, խերիքյ ի մնամ:

Թակավորն էլ ասաց. - Բալա՛մ, ես էլ զաթի էն կուզեմ, համա վի՞ր խետ փսայվես, զիկ ասա, որ էրթամ նշանեմ:

Լաճն էլ ասաց. - Թակավոր ապրած կենա, ալա տյու չկիցա՞ր, վո՞վ ի իմ սրտի ուզած, իմ նշանլուն:

- Միրե Ջնանի ախչկան խե՞տն ես, - ասաց թակավոր:

- Հանլբաթ Միրե Ջնանի ախչկան խետն եմ, չանձ էն ավելի անուշ սիրելի ախչիկ էլ վո՞վ կա:

Թակավորն ասաց. - Էն զաթի քյոն ի. թե որ կուզես՝ ուրիշ ախչիկմ պիրեմ քյե խամար:

- Չէ՛. - ասաց. - թակավոր ապրած կէնա. էն մեյն զի խամար խերիքյ ի. ուրիշ մարթ չի լազմ զի:

Թակավորն ասաց. - Ծատ աղեկ. որ ըսկուն ի, էլենքյ խարսնիսի թադմարյուքյ տիսնանքյ:

Խաբար ինգյավ մեչ քյաղքյիս. բիթյուն լսան. որ թակավուրու լաճ պիտի փսայվի Միրե Ջնանի ախչկա խետ:

Խարսնսի պատրաստութեն տիսնալուն պես. փուսուլեքյ ճամխիցին նազիրներաց. վազիրներաց, թաշիրներսաց, բազրգյաններաց. կանչեցին խարսնսի:

Թակավորու լաճու խամար յոթն օր. յոթ կիշեր քյնմանի-սագով. դավուլ-զոտնայով խարսնիս արին: Խորոտ քյեֆով-ուրախութենով պոծավ: Էն խասեավ ուր մուրազին. տյու էլ խասնես քյո մուրազին:

Էն ուր դարդ բանլից փոթավ, մնաց մեր ջիել երիտասարթ:

Թակավոր կանչեց երիտասարթին, ասաց. - Տյու որ էսա աղեկութեն արիր խե զիկ, ի՞նչ կուզես որ տամ քյե:

Երիտասարթն ասաց. - Թակավոր ապրած կենաս, ես քյեզնից պանմ չեմ ուզե:

Ասաց. - Զուզելով չէլնե. ախր է՛: Մարթու էսա կանդանր ճիչ աղեկութեն անելուց սորա առանց փոխաթարցել չէլնե. մեխքյ պանն ի, աստված կանբյուլ չանի:

Երիտասարթն էլ ասաց. - Թակավոր ապրած կէնա, տյու կիտես, ես իմ ուզած խե քյե չեմ բարուշե, քյո նսաֆ ի՞նչ կուտաս տու:

Թակավորն էլ էլնվ մէ հա սոքյուլախի իլին ոսկի արաց, իտուր էնոր:

Ասաց. - Էսա տար. քյանի որ դյունեի վրեն սաղ ես, ուտես, խմես, քյե ծեռ կուտա: Մեկ էլ քյանի որ տյու իմ լաճուն խասուցիր ուր մուրազին. ես էլ քյե պիտի խասուցեմ քյո մուրազին:

Թակավորն կանչեց ուր վազիրներ, վյուքյելաներ, կանչեց ուր կնիյն ու ուր ախչիկ. կանչեց երիտասարթն էլ:

Թակավորն ասաց. - Երիտասա՛րթ. իմ ախչիկ պիտի նշանեմ քյե խամար: Կանչիցին սազբանդներ. թակավորու ախչիկ երիտասարթին խետ նշանիցին:

Երիտասարթն էլ օրմ կնանց թակավորի մոտ, ասաց. - Թակավոր ապրած կենաս, որ տյու քյո ախչիկ նշանիցիր խե զիկ, ամա ես մկա չեմ փսայվե, ես կուզեմ ինեմ դյունեին քիչմ ֆոամ, նոր զյանմ փսայվեմ: Համա տյու քյո խոսքի տեր կէնաս, չէլնի ախչիյտ ուրիշի տաս:

Թակավուրու լաճ ուր սոքյուլախի ոսկին տարավ տառոտկեց մեչ էօդին, էլավ թամ մեյ պեռ ոսկի. ինգյանվ դյունիեն գյան գյալ: Ծատ գնանց, քիչ կնանց, երկիրմ խասավ, որ էնտեղ սատանեքյ կապրին:

Աշուն էր, կալի վախտ էր: Սատանեքյ երիտասարթին ասին. - Զե՞ս իգյան էլնե մեր կալի վերեն կալչի:

Ասաց. - Կէլնեմ, ի՞նչի չեմ էլնի, ես էլ զաթի գործ կփնտռեմ, որ էլնի, անեմ:

- Հանդ ի՞նչ կուզես, չյում կալից պոծնենքյ:

Ասաց. - Պանմ չեմ ուզե, իմ գյլխու փափխով մենակ զիկ ցորեն տաքյ, խերիքյ ի:

Սատանեքյն էլ չեն կիտի, որ էնոր գյլխու փափախ սոքյուպախ ի էնոր խամար, ասին. - Ջա՛նմ, գյլխու փափխով ցորեն ի՞նչ ի, տե՞ղ ի, թե դանրման ի, չանփով բանզանո արա, պեռնով բազանո արա, խենքյ ի՞նչ կուզես:

- Իմ չափ, - ասաց. - իմ գյլխու փափախն ի. իմ փափխով զի խերիքյ ի:

Սատանեքյն էլ կնքով արին. ուրախ-ուրախ մէ մեկու ասին՝ էսա մարթ շատ աղեկ էր. որ մե ռաստ էկավ, խաբ արա լոռ կպնին. մեզ քյեռլոզ ցորեն ի՞նչ ի. մեզ փափախ ցորեն կուտան մարթու կալեմաղթ:

Մեչ էնոնց ժողով արին, սատանեյթերաց ճոչն ասաց. - Մեզ փափախ ցորեն կուզի. ամա կիտեքյ էնոր փափախ ի՞նչ փափախ ի. սոքյուլախի չի՞ մի:

- Չէ՛, ջանմ, - ասին, - սոքյուլախ ո՞րտեղից կնաց ինգյավ էսա խեղճ մարթու ծեռ:

Վարհասըլի արին կալջի վեր ուրենց կալին, չուր որ կալից պոծան:

Օր եկավ երիտասարթ ասաց. - Իմ հնդ տվեքյ. ես կէրթնմ:

- Շատ աղեկ, - ասին, - պե՛ փսռիախտ, չափենքյ. տանքյ:

Առին կալջին, մեյտեղ կնցին մեչ կալին, բաշլայեցին փափախ լցել. որ չնփեն, կտիսնան, որ քյանի կլցեն, փափախ ճար չկա իշխելու:

- Հե՛յ հաքյ, - ասին, - մեր տուն ավիրվավ, էս ի՞նչ փափախ ի, որ չելինվե:

Ասին. - Էսա քյո փափախ խարթախ ի: Չյունքյի քյանի կլցենքյ՝ իլին չէլնե:

- Ջա՛նմ, - ասաց, - ինչ ի՞նչ եքյ լցե, որ իլին էլնի, ինչ ճանգմ պնմ եքյ լցե, մեյ փափախ ի չե՞քյ կանա իլինե, ապա որ չնփերով բնրուշի ի՞նչխ պիտի պարտքիցս էլնիքյ տյուս:

Վարհասըլի լցեցին, լցեցին, չուր փափախ իլին էլնվ, սատանեյթերաց ցորեն զաթի խլսավ պոծավ:

- Վա՛յ, վա՛յ, - ասին, - էսա մարթ մեր տուն ավիրեց, էս ի՞նչ մարթ էր, էս ի՞նչ փափախ էր, մեյ խատ բիլաւ չմնաց, որ էս տարի անենքյ մեր իդարեն, չում կալոցին ցանքյեր խասնեն, էլ ճար չկա. մենքյ էս տարի պիտի սովամախ էլնենքյ: Էսա մարթ կալջի չէր, որ ռաստ էկավ՝, սով էր մե ռաստ էկավ, չյունքյի ուր փափխով սով իսկեց մեչ մե, ի թող կնցնց, օրենքյի եէլ չմտնե. որ մարթ տանի թատի: Դո՞ր որ էրթնքյ պիտի ասեն թե՝ մարթ ուր գյլխու փափախով ցորեն բնրուշեր ի, ուր բնրուշածն էլ առե, տարեր ի:

Երիտասարթ կնցնց առեց խարիր խազար խատ ծի, ճորի, էն ուր ցորեն պնրցեց, կնցնց տեխ թակավուրու քյաղաքյ:

Սատանեյթերաց ճոչն կանչեց էնոնց, ասաց. - Էնոր որ ժողով արինքյ ծե չասի՞, թե էնոր փափախ ի՞նչ փափախ ի, սոքյուլախի չի՞: Տյուքյ բիթյուն մեյ պերան ասիքյ ծի՝ չէ՛, ջանմ, սոքյուլախի ո՞րտեղից էկավ ինգյնվ էսա մարթու մոտ:

Էնոյն էլ ասին. - Ջա՛նմ, մենքյ ի՞նչ կիտենքյ սոքյուլախի եէր, մենքյ ասինքյ իսնի փափախ էր:

Երիտասարթ ուր ցորեն առեց, կնցնց չուր թակավորի քյաղաքյ, բիթյուն իլից. արաց ինմբնր: Էն ծմեռն էլ էդա ինպով սաստիկ սով ինգյնվ մեչ սատանեյթերաց, ինգյնն աշխար, խարց-փործ արին, աշեբաւ խաց ո՞րտեղ կա, առնենքյ ուտենքյ, անութի չմեռնենքյ, չուր գյնրուն պնցվի:

Խնմբնր կնցնց սատանեյթերաց, թե ֆլան քյաղաքյ ցորենի ինմբնր կա, կծախեն, կնցնցեքյ առեքյ:

Սատանեքյ էլնն առին ուրենց տավրներ, քշիցին կնցնցին խարուցելով, փտոտելով խասան չուր էն թակավորի լաճ, որ երիտասարթ ինմբնր ի արե:

Սատանեքյ կէրթնն, կկայնեն ինմբնրի ինոնճ, խարցուցին երիտասարթին. - Ցորեն քյանի՞ կուտաս:

- Քյանի՛. - ասաց. - Էս տարի սով ի. չափ ութ խարիր կուտուշ ի:

- Ութ խարիր կուտուշ, տնաշե՛ն. քիչմ էլ մարհամմաթ արա. էտա կանղար էլ բեընսաֆ կէլնե՞ն:

Երիտասարթն ասաց. - Դե՛յ. որ բեընսաֆ իմ. կնացեքյ անութի սատկեքյ:

Վարհասըլի տարան, պիրին Էրկու խարիր կուտուշ պայսցուցին:

Երիտասարթ ուր բիթյուն ցորեն չափ վեց խարիր կուտուշից ծախեց սատանեյիթերաց:

Շատ մնաց, թե քիչ, երիտասարթ օրմ կնաց մո թակավոր. ասաց. - Թակավոր ապրած կենաս, ես պիտի խարսնսի պատրաստութեն տեսնամ. ախչիյտ հազր ի՞, թե՞ չի:

Թակավորն ասաց. - Այո՛, պատրաստ եմ, ախչիյն էլ հազր ի:

Երիտասարթ կանչեց քյաղքյի ճիչ մարթեր, նազիր, վնազիրներ, սանդրուզանմ, վյուքյելաներ, յոթն օր, յոթ կիշեր խարսնիս արին, քյեֆով ուրախութնով, թակավուրու ախչիկ երիտասարթին տվին, խարսնսից պոծան. ինոնք խասան ուրենց մուրադին, տյու եէլ խասնես քյո մուրադին:

Երկնուց իրեքյ խնձոր ինզյանվ, մեյն՝ ասողին. մեյն՝ լսողին. մեյն էլ՝ զյրողի՞ն ասիմ, թե՞ ականջ արողին: